ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՒՀԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՊԱՏՄԱԿԱՆ ՅԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ ԵՕԹԱՆԱՅՈՒՆ ՀԻՆԳ ԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

1892—1967

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ՝
Վ. ԱՆԴՐԻԱՍԵԱՆ

ՆՈՐ-ՋՈՒՂԱ
ՏՊԱՐԱՆ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԱՑ
1967

ՉՕՆ

Գիրքը հրատարակում եւ նուիրում է
Հայուհեաց բարեգործ. Ընկերութեան հիմնադիր
հանգ. ՅՈՎՍԻՓ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ Յիշատակին։

ԵՐԿՈՒ ՏՕՄՔ

(ԻՐԻՆ ՆԱԽԱԲԱՆ)

Նոր-Ջուղայի Հայուհեաց բարեգործական Ընկերութիւնն իր երկարամեայ գոյութեան ընթացքում նշանակալից դեր է խաղացել Ջուղահայ Ազգային և հասարակական կեանքում, որը ունի 75 տարիների պատմութիւն։

1962 թուին լրացաւ նրա գոյութեան 70 ամեակը, որի համար նախատեսուեց տօնել այդ յոբելեանը։

Համաձայն Բարեգործական Ընկերութեան և Ազգային Իրբանոցի գոյգ վարչութիւնների հրաւէրի, որին իրենց մասնակցութիւնը բերին Ջուղայում գոյութիւն ունեցող բոլոր Ազգային մարմինները և անհատ ազգայիններ որը տեղի ունեցաւ 1962 թի Յուլիս 4-ին, երեկոյեան ժամի 6 ½-ին, Ս. Ամենափրկչեան վանքի ժողովատեղում՝ թեմի առաջնորդ՝ Գեր. Տ. Ներսէս վրդ. Բախիկեանի հովանաւորութեամբ կազմել մի յոբելենական յանձնախումբ պատրաստելու հայուհեաց բարեգ. ընկերութեան հիմնադրութեան 70 ամեակի և բազմամեայ վաստակաւոր տիկ. Մարիկ Տ. Աբգարեանի ազգային գործունէութեան 55 ամեակի առիթ տեղի ունենալիք հանդիսութեան տօնակատարութեան աշխատանքներին։ Ապա մի շարք մտքերի փոխանակումից յետոյ ձայների մեծամասնութեամբ ընտրուում է յոբելենական յանձնախումբը հետեւեալ կարգով՝

Նախագահ՝	Պրն. Արամ Ալչուջեան
Գանձապահ՝	» Վարդան Անդրէասեան
Քարտուղար՝	» Յարութիւն Սիրտումեան
Անդամ	» Միհրիկ Տէր Սիրչեան
»	Տիկ. Զլօրա Միրտումեան

*Յանձնախումբը իր առաջին նիստում որոշ մտքերի

փոխանակումից յետոյ որոշում է՝

Ա. — Յոբելեանի ծանակատարութիւնը տօնել առաջիկայ Հոկտեմբերին (1962 թ.)։

Բ. — Ուսումնասիրութիւն կատարել, տալով Հայուհեաց Բարեգ. Ընկ. պատմութիւնը, նաև Տիկ. Ծագիկ Արզարեանի կենսագրութիւնը։

Յանձնախմբի երկրորդ նիստը տեղի է ունենում 1962 թւի Օգոստոս 22-ին, երեկոյեան ժամի 5-ին, Ս. Ամենափրկչեան վանքի ժողովարանում Գերապատիւ առաջնորդ հօր ներկայութեամբ։ Պրն. Ալչուջեանի կողմից հարց է տրուում, արդեօք յոբելեանը տօնելու է միայն Նոր-Ջուղայում, թէ առանձնայուն է ասելի լայն ծաւալ, ի պատասխան պ. Արամի, Գերապատիւ հայր սուրբը նշումէ, որ լաւ է մի փոքր ասելի լայն ծաւալ տալ և Թերթերի միջոցաւ տեղեկացնել հանրութեան՝ ծանօթացնելով Բարեգործականի դերը և նշանակութիւնը իր շրջապատի համար։ Նաև որոշւում է հանդիպում ունենալ տիկ. Ծագիկ Արզարեանի հետ, նիւթեր վերցնել Բարեգործականի արխիւից, կազմելու յիշեալ ընկերութեան համառօտ պատմութիւնը։

Ինչպէս որոշել էր պրն. Ալչուջեանի հետ տեսնուեցինք տիկ. Ծագիկ Արզարեանին որ և ամենայն յօժարութեամբ մեզ տրամադրեց Ընկերութեան արխիւը, որից յետոյ ինձ վրայ պարտականութիւն դրեց կազմելու Բարեգործականի պատմութիւնը։ Սոյն ընկերութեան պատմութեան մի մասը դրի է առել բանասէր պրն. Արամ Երեմեանը դեռ 1920 թւին և տպուած ունի իր «Նոր-Ջուղա» աշխատութեան մէջ, որը բռնում է դրքի էջ 60-ից 70-ը, ընդգրկելով 1892 թւից մինչև 1918 թիւը, դրանից յետոյ է որ ձեռնամուխ եղանք լրացնելու այս պատմութիւնը սկսած 1918-ից, 1962 թիւը, որը ներկայացնում ենք ըստ հերթական շրջաններին։

1949 թւի Սեպտեմբեր 1-ին, տեղի ունեցաւ ազգային Որբանոցի դոյութեան 40-ամեայ յոբելեանը, որը տօնուեց Նոր-Ջուղայում և այլ շրջաններ, յայտնաբերելով մի շօշափելի դաւմար Որբանոցի օգտին։

Որբանոցի քառասուն ամեայ յոբելեանի տեղեկագրի մէջ խօսելով նրա հիմնադրութեան և գործունէութեան ընթացքի մասին, դեկուցողը կարդում է «խօսելով Ս. Կատարինեան Որբանոցի հիմնադրութեան և գործունէութեան ընթացքի մասին, չի կարելի աչքաթող անել և դանդաղութեան մատնել, այսպէս ասած նրա նախածնող և գոյութիւն բերող մի այլ հիմնարկ, որպիսին է «Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը», որի յիսուն վեց տարի առաջ համեստ սկզբնաւորութիւնը հիացմունք պատճառելուց բացի, ունի իր շինիչ և դաստիարակիչ կողմերը նեղկա սերնդի համար» և այլն։ Ուրեմն Բարեգործական միութիւնն իր առաջի օրերանից, իր համեստ հիմնադրի սկզբմունքով և ամսական 2-ից 10, շահի ամսավճարով և մի քանի մատիտների և դրենական պիտոյքների վաճառումից գոյացած աննշան դաւմարով սկիզբ է առնում, որն այնուհետև զարգանում և ձեռնամուխ լինում ասելի մեծ գործերի իր հաղարների հասնող դրամագլխով, ըստանձնելով նաև Որբանոցի խնամատարի պաշտօնը։

Ահա այս յոբելեանն էր, որ նկատի առնուեց տօնելու, բայց որոշ պատճառներով ժամանակին դլուխ չեկաւ և գործը մնաց թերի վիճակում։ Քանի որ այս տարի լրանում է նրա գոյութեան 75 ամեակը (1892-1967) Միութիւնը նկատի է առել տօնելու այս նշանակալից տարեդարձը, որի 75 ամեայ գործունէութեան համառօտ պատկերը ներկայացրում է սոյն դրքոյկում։

Վ. Ա.



ՅՈՎՍԷՓ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Նոր-Ջուղայի Հայուհեաց Բարեգ. Ընկ. Հիմնադիր

1892

ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՒՀԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՊԱՏՄԱԿԱՆ ՅԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ)

1892 — 1967

Նոր-Ջուղայի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնն իր եռանդուն գործունէութեամբ և վեհ նպատակով նշանակալից դեր է խաղացել Ջուղահայ ժողովրդի կեանքում և ունի 75 տարիների պատմութիւն, որը ներկայացնում ենք այստեղ այդ Ընկերութեան գործունէութեան պատմութիւնը համառօտակի ընդհնումներով։

Ա· ՇՐՋԱՆ 1892 1908

Ընկերութիւնն և իր հաստատութիւնները գոնւում են Թեմակալ Առաջնորդի անմիջական հսկողութեան և հովանաւորութեան ներքոյ։ Հիմնուել է 1892 թուին Նոր-Ջուղայեցի մի համեստ ուսուցիչ Յովսէփ Բարսեղեանի և Ս. կատարինեան օրիորդաց դպրոցի բարձր դասարանի աշակերտուհիների նախաձեռնութեամբ, որոնք տեսնելով, որ բազմաթիւ աշակերտուհիներ զուրկ են թէ հայոցատից և թէ դասական պիտոյքներից, կազմում են մի ընկերութիւն և մի որոշ դումար հաւաքելով, սկսում են նիւթեր առնել, զանազան տեսակի ձեռագործներ պատրաստել, վաճառել և գոյացած հասոյթով որը, չքաւոր աշակերտուհիների համար հագուստ և դասական պիտոյքներ գնել։ Այսպէս աշակերտուհիներն իրենց ուսուցչի առաջնորդութեամբ 1892 թուին կազմում են սոյն ընկերութիւնը (Որուհետև խնամակալ ընկերութիւն) անուանում։ Այնուհետև ընկերութեան գործօն

մասնակցութիւն ցոյց են տալիս դրսի կանանցից և օրիորդներից շատերը, որով ընկերութիւնն աւելի է ընդարձակւում և զբաղում աւելի որոշ հիմունքների վրայ։ Առաջին տարիներում Ընկերութիւնը դրամի պակասութեան պատճառով նպաստում է միմիայն Ս. Կաթարինեան օրիորդաց դպրոցին՝ տալով չքաւոր աղքատ աշակերտուհիներին հագուստ, դասական պիտոյքներ։ Այդ է միայն եղել 1892-97 տարւայ ներս գործունէութիւնն։ աւելին էլ նա չէր կարող անել, քանի որ դեռ նոր էր որոշ կազմակերպութեան բնաւորութիւն տացել և մանաւանդ նրա նիւթական պայմաններն էլ այնքան յաջող չէին։

1897 թւից սկսեալ Ընկերութիւնը, բացի դպրոցական պիտոյքներից, տալիս է 20-25 չքաւոր երեխաներին Ջուխակեան կամ Ծննդեան տօներին դպեստ կամ վերարկու։ Ապա հետև Ընկերութիւնը, այսպէս մի քանի տարի էլ շարունակում է իր գործունէութիւնը մինչև 1900 թուականը, երբ դրսից ստացած նիւթական աջակցութիւնը նոր ուռանդ է ներշնչում ընկերութեան դեկավարներին և այնուհետև ընկերութիւնն աւելի հարստանալով և առաջադիմելով, մտածում է անպատմուճնների ինքնակրթութեան մասին՝ բերել է տալիս ընթերցանութեան գրքեր և մի քանի պարբերական հրատարակութիւններ՝ «Թռչուկ», «Արմենիա» «Աղբիւր-Տարագ» և այլն։ Յաջորդ 1901 տարւայ շրջանի սկզբում, Ընկերութիւնը մի քայլ առաջ է դնում, կարիք է զգացում ընդարձակելու Ընկերութեան Ծրագիր-Կանոնագիրը և գործունէութեան շրջանը, այդ նպատակով Ընկերութիւնը դիմանում է նորակառոյց «Ս. Կաթարինեան» օրիորդաց դպրոցին, ընտրում է մի նոր մանկամարդ և փոխ տեսուչ պ. Գաբրիէլ Պալեանի ու վարչութեան անդամների նախաձեռնութեամբ մշակում է մի նոր և աւելի ընդարձակ կանոնագրութիւն։ Ընկերութիւնն ևս կոչւում է այնուհետև

«Նոր-Ջուղայի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւն»։

Այդ կանոնագրութիւնը հաստատւում է Թեմիս Առաջնորդ Մաղաքիա եպիս. Տէրունեանի կողմից և Ընկերութիւնն այնուհետև իր գործունէութիւնը շարունակում է այդ կանոնագրութեան տրամադրութեան համաձայն, որը շարունակւում է մինչև այսօր, ենթարկելով միայն մի քանի որոշ փոփոխութիւններ։ Ահա այդ կանոնագրութեան էականն մասերը՝

1— Ընկերութեան նպատակն է նպաստել լուսաւորութեան տարածմանը հայերի մէջ Նոր-Ջուղայում, իսկ միջոցները ներքին նաև դրսական դաւառներում և գիւղերում։

2— Սոյն նպատակին հասնելու համար Ընկերութիւնն ըստ իր ոյժերի գործադրման՝

Ա— Պահպանում է գոյութիւն ունեցող Հայոց Ազգային երկսեռ դպրոցները, նիւթապէս նպաստելով նրանց։

Բ— Բացում է արհեստագիտական գործարաններ Նոր-Ջուղայում։

Գ— Օգնում է չքաւոր աշակերտութեան ուսման ընթացքում, կամ ուսումն շարունակելու՝ նրանց, որոնք ապագայում բաւարարական պաշտօն պիտի վարեն Ընկերութեան օժանդակութեամբ կամ հովանաւորութեան ներքոյ գտնւող դպրոցներում։

Դ— Հիմնում է ընթերցարան — գրադարաններ։

Ե— Օգնում է տաղանդաւորներին ժողովրդական բաւարարութիւններին, ժամանակ, որպիսիք են ասմունք, տարափոխիկ հիւանդութիւններ, ախտ և այլն։

Զ— Դաւառների կամ գիւղերի լուսաւորութեան գործին նպաստելու նպատակով, Ընկերութիւնն որոնդիրներ կամ արգելքուհիներ է գետեղում Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչեան հոգևոր դպրանոցում կամ Ս. Կաթարինեան դպրանոցում։ Այդ սան-սանուհիները պէտք է լինեն Նոր-Ջուղայեցիներ կամ դաւառացիներ և Ընկերութեան իր-

նամքը կ'վայելեն այն պայմանով, որ ուսման ընթացքն աւարտելուց յետոյ ուսուցչական կամ հոգևոր կոչմն ընդունեն իրենց բնագաւառում գործելու համար։

է — Կարևոր դէպքում, եթէ ի վիճակի է, նպաստում է և այլ աղդօդուտ և բարեգործական ընկերութիւններին։

Այսպէս Ընկերութեան ղեկավարները հաստատուն հիմքերի վրայ են դնում գործը և աւելի ընդլայնում իրենց գործունէութեան շրջանը։ 1902 թ-ին Ընկերութիւնը կարիք է զգում բանալ կար ու ձևի արհեստանոց, ուր անպամուհիները դրսից աշակերտուհիներ հաւաքելով, ձեռագործ են սովորեցնում և դրանով նպաստում մի կողմից աշակերտուհիների առաջադիմութեանը և մեա կողմից դարկ են տալիս Ընկերութեան տնտեսական զարդացմանը։

Նոյն 1902 թ-ին՝ Ակդ. երկաեռ դպրոցների հոգաբարձութեան փոխադարձ համաձայնութեամբ Ս. Կատարինեան օրիորդաց դպրոցի ձեռագործի ճիւղն յանձնւում է Ընկերութեան իրաւասութեան, մատակարարելու աշակերտուհիներին հարկաւոր նիւթերը և հսկելու նրանց գործունէութեան վրայ, որ շարունակւում է մինչև այսօր։ Պատրաստուած ձեռագործները պատկանում են Ընկերութեանը, որ վաճառում են հանդէսների ներկայացումների և վիճակախաղի ժամանակ։ Պէտք է ասել, որ այդ գործը դըրուած է կանոնաւոր հիմքերի վրայ և առաջ է տարւում շատ գոհացուցիչ կերպով։

Յաջորդ 1903 թ-ին Ընկերութիւնը նկատելով, որ շըրջանիս բազմաթիւ հայ ղ/ւղերի դիւղացիութիւնը խարխափում է խոր տգիտութեան մէջ և մանաւանդ յատկապէս աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ այդ տեսակէտից իգական սեռի կրթութիւնը շատ մոայլ մի պատկեր է ներկայացնում՝ որոշում էր և իրան նպատակ դնում, իր բարոյական և նիւթական կարողութեան չափով նպաստել կրթական գործի առաջադիմութեանը։

Ահա այս շատ կարևոր գործն ի նկատի ունենալով Ընկերութիւնը 1903 թ-ին որոշում է Փերիա գաւառի Ամանդիքարան գիւղում բաց անել օրիորդաց մի դպրոց. բայց ուսուցչուհու բացակայութեան պատճառով, նա իր այդ նպատակին իրագործում է 1904 թ-ականին. յիշեալ գիւղում ուղարկում է մի վարժուհի, հոգալով նրա տարեկան ռճիկը 100 թումանու Այնուհետև ամէն տարի վարչութիւնը հոգում է մի գիւղական վարժուհու ռճիկ 60-100 թումանի վճարով։ Բացի ռճիկից մի տարի էլ նա ուղարկել է չքաւոր աշակերտուհիների համար երկու թոփ համազգեստի կտոր և մի ոտքի քարգաի և դասական պիտոյքներ։ Այդպիսով Ընկերութիւնն իր գործունէութեան շրջանը սկսում է նաև գիւղերում։

1905 թ-ին Ընկերութիւնը ձեռնարկում է երեկոյթ — ներկայացումների և այնուհետև առնւազն տարին 2-3 անդամ ներկայացումներ է տալիս. յօդուտ կամ Ընկերութեան կամ Որբանոցի։

1906 թ-ին բաց է անում մի խանութ հեղբոնական պարագին կից, ուր վաճառւում են գանազան ապրանքներ և Ընկերութեան դպրոցում պատրաստած ձեռագործները, բացի այդ ընդունում է պատւէրներ շորեր կարելու։ Այնուհետև Ընկերութեան վարչութիւնն իր գործունէութիւնը շարունակում է նոյն ուղղութեամբ, մինչև 1908 թ-ականը։ 1908 թ-ին վարչութիւնը ներկայացնելով Ընկերութեան անդամներին — Ընդհ. ժողովում — իր գործունէութեան տեղեկագիրը հրաժարւում է։ Ահա այսէ Ընկերութեան Ա. շրջանի էական դծերը։



ՀԱՅՐ ԲԱԳՐԱՏ ՎՐԴ. ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆ

Հիմնադիր՝ Ս. կաթար. ուրբանոց Սուրենյանցոցի

Բ. ՇՐՋԱՆ 1908—1913

Բացւում է 1908 թ.-ի շրջանը. Ընտրւում է մի նոր վարչութիւն, բաղկացած չորս հոգուց Տիկ. Թագուհի Կարապետեան՝ նախագահ, Տիկ. Մադիկ Աբգարեան՝ քարտուղար, Տիկ. Մադիկ Յարութիւնեան՝ գանձապահ, Օր. Մարիամ Յարութիւնեան խարհրդակից անդամ. Վարչութիւնը պաշտօնի դլուխ անցնելով Ս. Կատարինեան օրիորդաց դպրոցի 30-ամեայ յոբելեանի առթիւ շրջում է Ջուղայի բոլոր տները և հանդանակում մօտաւորապէս 1000 թուման մի գումար, յօդուտ նոյն դպրոցի «անձեռնմխելի» ֆոնդի. Ապա իր վրայ է վերցնում Ազգ. երկսեռ դպրոցների չքաւոր աշակերտ — աշակերտուհիների հաշւարանի հոգայոզութեան դործը, նոյնպէս և հերթով հսկելու պարտականութիւնը.

Այնուհետև Ընկերութիւնն՝ ի նկատի առնելով Գրադարան-Ընթերցարանի օգտակարութիւնն և անհրաժեշտութիւնն և ընդհանրապէս իգական սեռի մէջ ընթերցանութեան բացակայութիւնը՝ յատկապէս կանանց և օրիորդների մտաւոր և բարոյական զարդացման նպաստելու համար, 1909 թւի Սեպտեմբերի 13-ին, Հայր Բագրատ վրդ. Վարդապարեանի նախագահութեամբ բաց է անում արհեստանոցի մի բաժանմունքում մի «Ընթերցարան» նւիրւած «Իմիթրեան» Կաթողիկոսի յիշատակին որի կառավարչի և գրադարանապետի պաշտօնը յանձնւում է նախ օր. Վարդուհի Մաչիկեանին և ապա օր. Եղիսաբեթ Խաչէլեանին. Այժմ ընթերցարանն ունի մօտ 250 հատոր դիրք և ստանում է մի քանի պարբերական հրատարակութիւններ. Որպէսզի ընկերութեան համար եկամուտի մի նոր աղբիւր ևս աւելացնի, բաց է անում դեստ կարելու բաժանմունք, որի համար վարձւում է մի կարանող օրիորդ. Այսպէս

ընկերութիւնը մի կողմից ձգտում է աւելի ընդլայնել իր գործունէութիւնը, միւս կողմից աշխատում է գարկ տալ տնտեսականին, որպէսզի կարողանայ աւելի ամուր և հաստատուն հիմունքների վրայ դնել իր ձեռնարկութիւնները։ Այդ նպատակով նա ձգտում է իր մօտ եղած 1000 թուման դրամագլխով Փերիա գաւառի Նամակերտ գիւղից մի յարմար կալուածք դնել, բայց այդ չի յաջողւում, ուստի ոյն դրամագլուխը ապահովեցնում է Ռուսաց վոխատու բանքում, չորս տարով և հարիւրին վեց տոկոսով։

Այնուհետև Ընկերութեան խնդիրը, որ առաջ դնում էր Ս. Կատարինեան օրիորդաց դպրոցում, յարմար է համարում Սրբազան Առաք Արք եպիսկոպոսի հրամանով տեղափոխել գրավաճառանոցի կից սենեակը։ Այդպիսով ընկերութիւնն ընդարձակում է իր խանութը և աւելի արդիւնք առանում, ինարկէ համեմատած նախկին տարիներին։

Ինչպէս անցեալում, նոյնպէս էլ այս 1908 ~ 13 ուսումնական տարեշրջանում՝ Ընկերութիւնը Ս. Կատարինեան օրիորդաց դպրոցի չքաւոր աղջիկներին տալիս է 150—200 թուման դասագրքեր և ուսման պիտոյքներ։ Բայց այդ բաժանում է բրղեայ կտորից ձնած շապկայուններ, համազգեստի կտոր և կօշիկներ։ Նոյնպէս գիւղի համար ուղարկում է մի վարժուհի և Բոլորան գիւղի չքաւոր աշակերտուհիների համար համազգեստ և Նամակերտի դպրոցի համար քարտիսաւ։ Նոյն 1908 ~ 13 տար. շրջանին Ընկերութիւնն Ազգ. երկսեռ դպրոցների ուսուցչական խմբի և սիրողների բարեհաճ մասնակցութեամբ տալիս է երկու ներկայացում, ունենում է երեք անգամ բուֆետ և չորս անգամ վիճակախաղ։

Ընկ. 1908 ~ 13 տարեշրջանի տնտեսական պատկերը կազմում է՝

Ռուսաց բանքում	1000 թուման

Առնուելիք պատրաստ ապրանք	920 թուման
Կանկարասիք	80 »
Ընդամէնը	2000 »

Ահա Ընկերութեան վարչութեան Բ. շրջանի գործունէութեան պատկերը։

Գ. ՇՐՋԱՆ 1913—17 Թ.

1913 թուին ընտրուում է մի նոր վարչութիւն, բաղկացած հինգ հոգուց. Տիկ. Ծաղիկ Շուշուրեան՝ Նախագահ, Տիկ. Ծաղիկ Արզարեան՝ Քարտուղար, Տիկ Վարդուհի Դաւթեան՝ Գանձապահ, Օր. Եղիսաբէթ Իսրայէլեան Գործագործարանի եւ Որբանոցի կառավարիչ, Օր. Աբեղեան Դաւթեան՝ խորհրդակից անդամ։ Վարչութիւնն անցնելով գործի՝ 1913 թուին Նոր-Ջուղայի Ազգ. Թատրոնի յօգուտ կանչ հանդէսի առթիւ նուիրում է 655 դրանի արժողութեամբ դրեստներ։

Յաջորդ 1914 Փետր. 6-ին, Առաջնորդական Մորհրդարանը յանձնում է Ս. Կատարինեան դորգագործարանի և Ազգ. Որբանոցի կառավարութեան գործը։ Որբանոցի համար վարչութիւնը խմբագրում է և տպագրել տալիս մի կանոնագրութիւն, որի համաձայն դեկավարելու են Որբանոցի առնուհիները։ Եւ որպէսզի Որբանոցի նիւթական պայմանները հաստատուն հիմքերի վրայ դրուին՝ Առաջնորդական Մորհրդարանի հետ համաձայնութեան գալով, Որբանոցի 400 թուման անձեռնմխելի դրամագլուխը վերածելով Անգլիական դրամի փոխադրում է Լօնդօն, Անգլիական կառավարութեան բանքն. աւելի տոկոս ստանա-

յու նպաստակով։ Բացի այդ 1914 թուին Վարչութիւնը 1170 թուման դրամագլխով Զարդուն գիւղից մի կալուած է առնում, որից ստանում է տարեկան 6 - հազար ցորեն։

Ինչպէս ամէն տարի, նոյնպէս էլ 1913 - 17 ուսումն. տարեշրջանում վարչութիւնը հոգում է չքաւոր աշակերտների պարզագական պիտոյքները, տրամադրելով 900 դրամի չափ մի գումար։ Կազմակերպում է նոյնպէս երեկոյթներ և ներկայացումներ և ակտիւ գործունէութիւն է ցոյց տալիս հասարակական նպատակներով կազմակերպուող ներկայացումներին և որից ստացած գումարի մեծ մասը յատկացնում է Որբանոցին կամ Ընկերութեան։

Վրայ է հասնում 1916 թուականը, այդ այն տարին էր երբ շրջանիս գիւղացիութիւնը տնքում էր ռազմակ վանդալների ձեռքում, որոնք անվերջ հարստահարում, կեղեքում և քայքայում էին աշխատաւոր գիւղացիութեան քրտունքով նոյն իսկ նրա ֆիզիքական գոյութեան։ Ահա այդ տարին էր, որ Միլակերտ հայաբնակ գիւղն ուազակաւոր Սալլար Մախսուդի հարստահարութեան և կեղեքումին զոհ դնաց։ Գիւղացիութիւնը յուսահատ, թողնելով իր տունն ու տեղը, խոփն ու արօրը, որսի անհուն կսկիծով փախչում էր դէպի Նոր - Ջուղա (Տես այդ մասին իմ յօդուածը «Խոբրիկներ Ն. Ջուղայից» վերնագրով «Արեւի» 1916 - 17 ու. 272 և 56 № - ներում Զարիպ Արամ կեղծ անունով)։ Հարկաւոր էր շուտափոյթ օգնութեան հասնել այդ տարտղին ժողովրդին։ Ահա այստեղ ասպարէզ է գալիս Ընկերութիւնը։ Նա մի կոչով հրաւիրում է ժողովրդի ուշադրութիւնն այդ հանդամանքի վրայ, բայց ակնկալուած արդիւնքը չի առանում։ Այդ տխուր Ընկերութիւնը տալիս է իւր սուղ միջոցներից ինչ որ կարողանում է՝ վերմակներ, հագուստներ և փող։ Այնքան մեծ չէր նրա ուսածը, բայց խնդիրն այդ չէ այլ նրա դիտակցութեան հողին, նրա զգալու և օգնելու տենչը։ Բացի այդ 1916 թուին

«Կարմիր Խաչի» մատնակցութեամբ, Ռուսաց զօրքի համար պատրաստում է 320 կտոր սպիտակեղէն և նոյնի զօրքի զգեստաւորման համար նոյն թուին Արժանապատիւ տէր Եսայի քհնյ. Յովհաննիսեանի յօբելեանի առթիւ վարչութիւնը պարտք է համարում դնահատել յօբելեարին և այդ առթիւ նուիրում է մի արծաթեայ շրջանակ։

1917 ուսումն. տարւայ մանկավարժական խորհրդի նախձեռնութեամբ բացած «Ձրի ճաշարան»-ին նուիրում է մի խոշոր ցորեն, նաև նոյն ճաշարանի օգտին բաց է անում ձեռագործարան, իսկ Ծննդեան տօների առթիւ վարչութիւնն Ընկերութեան գումարից մօտ 160 թուման յատկացնում է Ն. Ջուղայի չքաւորներին բրինձ և ածխի մատակարարելու համար։ Ճիշտ է Ընկերութիւնն իր նպատակները իրագործելու համար ունեցել է կոզմնակի ներ և օժանդակութիւն, բայց նրա աղբիւրներն են եղել Հանդէս - ներկայացումները, վիճակախաղերը, Բիւֆէտ, ձեռագործներից գոյացած եկամուտները և անդամահիների վճարները։ 1918 թուին վարչութիւնը վերամշակել է մի նոր կանոնադրութիւն և աշխատում է Ընկերութեան ճիւղեր հաստատել Հնդկաստանում և Զաւայում։

Եզրակացութիւն— Ինչպէս տեսանք Ընկերութիւնն իր գործունէութիւնն սկսել է առաւաքիւ անդամահիներով և մի աննշան դրամագլխով, իսկ այժմ ունէ խոշոր դրամագլուխ, թէև անդամահիների թիւը 80-ի է հասնում, բայց մի հանգամանք, որ աչքի առաջ պէտք է ունենալ, այն է, որ գործող անդամահիները կանայք և օրիորդներ են, որոնք մեծ չափով նպաստել են Ընկերութեան առաջադիմութեանը, թէ նիւթապէս և թէ բարոյապէս։ Այդ անդամահիների ջանքերի շնորհիւ է, որ Ընկերութիւնն կանդնել է այսօր քիչ թէ շատ հաստատ հիմունքների վրայ և մեծ ծառայութիւն է մատուցանում Ն. Ջուղայի էկական տեսէ առաջադիմութեան և գիւղերի

յուսաւորութեան գործին։ Բացի այդ Ընկերութիւնն իր գործունէութեան ամբողջ ընթացքում իր միջոցները նեղութեան չափ օգնել է թէ Ջուղայի չքաւոր դասակարգին, թէ գիւղերի չքաւոր երեխաներին և թէ Հայաստանում պատահած դժբախտութիւնների ժամանակ։ Նա գործել է մօտէնաի պահանջի համաձայն և չի խնայել իր աշակցութիւնը նիւթական նպաստներով։ Այսպէս՝ ի նկատի ունենալով սոյն Ընկերութեան կատարած մեծ դերը. ցանկալի էր, որ Ջուղահայ իգական սեռն աւելի լայն և գործօն մասնակցութիւն ցոյց տար, Ընկերութիւնն աւելի հաստատ հիմքերի վրայ դնելու համար, որ իսկապէս արժանի է մեծ խրախուսանքի և ամէն տեսակ քաջալերութեան։ Ահա այս է «Նոր-Ջուղայի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան» 26-տարեայ յամառօտ պատմութիւնը։

(Պատմութեան այս մասը արտատպած է պ. Աբրամ Եղեմեանի «Նոր-Ջուղա» գրքից էջ 60-70)։

1918—ի ՇՐՋԱՆ

1918 թ. Մայիսին ընտրւում է նոր վարչութիւն, բաղկացած 9-հոգուց. Նախագահ՝ Տիկ. Թագուհի Ս. Կարապետեան, Գանձապահ՝ Օր. Մ. Միւնասեան, Որբանոցի Գանձապահ՝ Տիկ. Մէրի Տ. Գրիգորեան, Քարտուղար՝ Տիկ. Անիա Միքայէլեան, Գործակատար՝ Տիկ. Ծաղիկ Աբգարեան, Տորհրդատուներ՝ Օր. Եղիսաբէթ Իսրայէլեան և Օր. Յակոբ Աբգարեան վարչութիւնը պաշտօնի դլուխ անցնելով իր դիտաւոր մասնաղութեան նիւթ դարձրեց Ընկերութեան ձեռագործարանը, նշանակելով գործելու օրերը, բայց ցաւօք սրտի պիտի արձանագրել որ՝ անդամուհիներից քչերը մասնակցեցին և ցանկալի արդիւնք չստացուեց,

ձեռագործարանը տեղի անյարմարութեան պատճառով ձրմեռը փակուեց։ Ընկերութիւնը մտադրութիւն ունենալով ապագայում մեծացնել ձեռագործութիւնը աւելացնել արհեստանոցում փորձում է շերամի սերմ բերել և մեծաքանակ տարածել, յաջողելու դէպքում գարկ տալ այդ ճիւղին։ Ընկերութեան խնամքը շարունակում է իր դոյութիւնը ևս իկին պայմաններում։

Ջուղայում ապաստանած գիւղացի աղքատներին օգնելու նպատակով, վարչութիւնը ձեռնարկում է մի հանգանակութեան և կազմակերպում է մի երեկոյթ հանդէս, որոնցից գոյացած գումարից մի մասը մատուցում է Առաջ. Ներհրդարանին գործադրելու յիշեալ գաւառացիներին իրանց գիւղերը փոխադրելուն մի մասով էլ 80 գոյգ գիւս է գընւում և բաժանւում տեղս ապաստանած գիւղացիներին՝ տեղից հեռացնելու իրանց գիւղերը և 500 դրան էլ ուղարկւում է նպաստամատոյց յանձնախմբին դարձեալ յիշեալ գիւղացիների տեղափոխութեան ծախսը հաշուին Մ. Ծնընդեան տօներին դգեստացու է դնւում և բաժանւում Ազգ. դպրոցների չքաւոր աշակերտուհիների և չքաւոր ընտանիքների մէջ։

Ընկերութիւնն ընդարձակելու նպատակով առանձին-առանձին հրաւիրագրեր են ուղարկւում բոլոր քիչ-շատ աչքի ընկնող տիկիններին և օրիորդներին, խնդրելով նրանց անդամակցութիւնը, որ և ունենում են բաւական թւով նոր մասնակցողներ։ Ընկերութիւնն իր կանոնագրութիւնից մի քանի օրինակ ուղարկում է տիկ. Ծաղիկ Շուքուրեանին՝ Հնդկաստանում և Ջաւայում ցրելու և ճիւղեր հաստատելու, նոյն նպատակով, սոյն կանոնագրութիւնից ուղարկւում է Կալկաթա Արժ. տէր Եսայի քահ. Յովհաննիսեանին։ Տիկ. Ծաղիկ. Շուքուրեանը տեղեկացնում է, որ Սինգափուրում հանգանակել է 2300 դիւրը և ապահովացրել է Սէթ Գալ Ընկերութեան մօտ, նոյնպէս



Տիկ. ԾԱՂԻԿ Պ. ՄԻԼՔՈՒՄԵԱՆ

(ՇՈՒՔՈՒՐԵԱՆ)

Եռանդուն գործունեայ եւ տարիների Նախագահուհի, որի ջանքերով Հնդկաստանում, Չաւայում եւ Սինգափուռում յաջողւում է յօգուտ Ուրբանոցին բաւական դրամական նպաստ ստանալ եւ ապահովացնել։

Գալիքթայում յաջողւում է օգուտ Ուրբանոցին նպաստ ստանալ 500 ռուփի ևկեղ. վարչութիւնից և 500 ռուփի պ. Յովհաննէս Գալստանեանից և փոխադրել տեղս Ընկ. նոյնպէս 500 ռուփի նւէր է ստանում Հօնկօնգաբնակ պ. Յարութիւն Աբգարեանից և ըստ նախրատուի ցանկութեան կէսը յատկացւում է Ուրբանոցի ընթացիք ծախսերին և կէսը Ընկերութեան։ Նաև յօգուտ Ուրբանոցին Ջուղայում ևս յինում են նախրատուներ։ Տարւայ ընթացքում Ուրբանոցի առնուհինների թիւը 6-ով յաւելանում է, նրանց կառավարելու և Ուրբանոցի վիճակը բարելաւելու համար, յարմար են դանում վարձել մի դաստիարակչուհի, որը գիշեր ցերեկ երեխաների մօտ մնալով հսկի նրանց։

1919 թի Յունիս 5-ին, մի ընդհանուր ժողով է ուենենում, որտեղ առաջարկւում է ունենալ դասախօսութիւններ, գործի համար ընտրւում է 5-հոգուց բաղկացած մի մարմին, որոնց եռանդուն ջանքերով ունենում են 21-դասախօսութիւններ։ Ընկ. կազմակերպում է մի ներկայացում և մի վիճակախաղ, որոնցից գոյացած դրամարներով, նպաստներ է տալիս գիւղական դպրոցներին, Հայ՝ հանրապետութեան տարեդարձի և վեհ. Շահն Շահի թագադրութեան հանդէսներին։

1920—22 ՇՐՋԱՆ

Վարչութիւնը 1920 թի Յունիսին գործի գլուխ գալով, իր ժամանակաշրջանում ունենում է 75 վարչական և 4-ընդհանուր ժողովներ, նախրած Ընկերութեան, Ուրբանոցի, գործարանի և Արհեստանոցի բարմապիսի ընթացիք գործերին։ Պաշտօնները բաշխւում են հետեւեալ կերպով, Նախագահ՝ տիկ. Աննա Գ. Միհայէլեան, Փոխ-Նախագահ՝ տիկ. Ծաղիկ Աբգարեան, Տիկ. Աննա Մկրտ-

յէլեանի հրաժարումով նրան փոխարինում է տիկ. Մաղիկ Աբգարեանը, Գանձապահ՝ or. Մարիամ Յարութիւնեան, Քարտուղար or. Աբեղեան Դաւթեան։

Ընկերութեան նախկին անդամ տիկ. Մէրխաթուն Յ. Կրէտեանի գրաւոր կարդադրութեան համաձայն ստացւում է տիկ. Աննա Գ. Մինքայէլեանի միջոցաւ մի կարի մեքենայ, արհեստանոցի համար և աշխատում են արհեստանոցն աւելի լաւ հիմքերի վրայ պահել, մի կողմից չքաւոր աղջիկների համար գործ հայթայթել և մի կողմից Որբանոցի ուսուհիների համար մի նոր աշխատանք աւելացնել։ Վարչութիւնը մտածում է ջուլհականոց ևս բանալ, բայց բժշկական ցուցմունքով հակառողջապահական համարեց, ուստի որոշում է մի ուրիշ անվնաս և պիտանի արհեստ ի նկատի ունենալ և յարմար է համարում դիւայտգործութիւնը, որը մի ատ ժամանակ սկսում է. բայց յաջողութիւն չի ունենում. Նորից ջուլհականոցը վերբացւում են երեք տորքերից և գործը յաջողութեամբ է առաջ գնում։ Նոյնպէս և աշխատում է գորգագործարանը, գործողների թիւը հասնում է 13-ի։ Անցեալում ևս նկատի ունենալով գորգագործարանի նիւթական սուղ պայմանները և այն հանգամանքը, որ քիչ պատուէրներ են ստացւում ձեռնարկում են մի ներկայացման, որից ստացւում է բաւարար արդիւնք։ Անցեալում ևս բնկ. անդամ տիկ. Մաղիկ Շուքուրեանը Ընկերութեան գորգերից 8-ը կառ առնում է Հնդկաստան և վաճառած դրամով ապրանք է ուղարկում, որ դրւում է բնկ. խանութը վաճառելու համար։ Ընկերութիւնն իր նպատակն էր դրել գարկ տալու ձեռագործարանին, վարչութիւնը մի շրջաբերականով յայտարարում է որ յաճախեն ձեռագործարան, բայց քչերն են ընդունում այս առաջարկն և ձեռագործարանը մնում է նախկին անկազմակերպ վիճակի մէջ։ Երկրորդ տարին ընդհանուր ժողովը մի յանձնախումբ է ընտրում գործը շարունակելու համար, յանձնախումբը կանոնաւոր յաճախում է, սակայն անդամուհիների չյաճախելու պատճառով գործը չի յաջողւում։

Իշխան Յ. Արղութեանի Ջուղա այցելելու առթիւ՝ վարչութեան կողմից նախաձեռնւում է նրան մի ասկեթել գործւածք և մի գոյգ փոքրիկ բարձի երես, գորգից պատրաստած արհեստանոցի կողմից, նաև նախընտրել է մի հարիւր ռիալ Ս. Ամենափրկչեան վանքին, որպէս մասնակցութիւն Իշխանի հիւրընկալութեան ծախսից։ Ընկ. իր մասնակցութիւնն է բերում նաև Ոսկու ֆոնդին նախընտրելով 55 թուման և փոխառութեան գործին 100 դոլար։ Ըստ սովորականի, դպրոցի չքաւոր աշակերտուհիներին բաժանում է դասագրքեր և գրենական պիտոյքներ, այլ և զանազան նախընտրութիւններ՝ ծննդավերջութեան, սննդի, ճանապարհածախս, Ս. Էջմիածնի համար քացւած հանդանակութեան և այլն։ Կալկաթայեցի պ. Յակիկ Աբգարեանից ստացւում է 300 ռուբի Ջուղայի աղքատներին ածախս բաժանելու համար, սակայն Ընկերութիւնը նկատի ունենալով, որ աղքատաց արկղի կողմից ածուխ բաժանւում է չքաւորներին, այդ դրամով գնեստացու են առնում և բաժանում կարիքաւորներին և յայտնում նախընտրին՝ի գիտութիւն։

Այս շրջանում Ընկերութիւնը մի շատ գովելի և գնահատելի գործ է ձեռնարկում, «Ջուղայի օրիորդների ապագայի մասին» բանաձևը։ Ընկերութեան ընդհանուր ժողովներից մէկում առաջարկւում է միջոցներ ձեռք առնել, անբարոյական հանգամարհով գնացող մի քանի աղջիկների վարք ու բարքը ուղղելու։ Այս առաջարկն ընդունւում է և որոշւում է մի մասնախումբ ընտրել խորհրդակցելու և հարկաւոր կարգադրութիւն անելու։ Մասնախումբը դիմում է վանքի աջակցութեան, սակայն դրական հետևանք չի ունենում։ Այս հարցի շուրջ կարծիք

հաչի նախաձեռնութեամբ Զուղայի կանանց ընկերութիւնները խաւը ժողով է տեղի ունենում խորհրդակցելու և նրանց ապագայի մասին հոգացողութիւն անելու։ Ունենում են մի քանի նիստեր, որտեղ զանազան միջոցներ են նկատի ունենում, սակայն ոչ մէկը գործնական չյինելով հարցը թողնւում է Ընկերութեան վարչութեան, վարչութիւնն էլ ուրիշ որևէ միջոց չէ գտնում, բացի նրանից, որ գոլդագործարանի և նորաբաց ջուլհականոցի համար, նոր գործողներ ուսեցնելու յայտարարութիւն տալ. դժբախտաբար այդ էլ դրական արդիւնք չունեցաւ։

Ընկերութեան հիմնադիր պ. Յ. Քարտեզեանի մահուան առիթով վախճանած Կալկաթայում, Ընկ. Ս. Ամենափրկչեան Վանքում մատուցում է Ս. Պատարագ և Հոգեհանգիստ, դրուում է մի ծաղկեպսակ և խօսւում է մի գամբանական։ Նաև մասնակցում է հանդ. Եղնիկ Ծ. վարդապետի յիշատակին կազմակերպած ազանդէսին, պնդելով երեք պատկներ ազատեզանի վրայ՝ Ընկերութեան, Որբանոցի և Գործագործարանի կողմից։ Ընդհանուր ժողովի որոշման համաձայն Ընկերութիւնը ձեռնարկում է Տօն օրերին քաղցրեղէն և խմորեղէն պատրաստել. մի կողմից Զուղային մաքուր և չխարդախուած իրեր տալ և միևնոյն ժամանակ այդ արհեստը տարածել Զուղայում և դրանով մի նոր եկամտի աղբիւր ստեղծել։ Գործի յաջողութեան համար ընտրում է մի յանձնախումբ, որը ձեռքից եկածը չխնայելով այդ գործի մէջ յաջողութիւն է գտնում 692 դրան և 70 սէնթ զուտ արդիւնք հասցնելով ընկերութեան։ Նաև Ղարդուն դիւղում ունեցած կալւածից 1920 - 21 թուականների համար ստացում է 577 լիտր ցորեն։ Համաձայն Ընկ. կանոնադրութեան, տարեկան եկամուտից հարիւրին 20 առկոս պէտք է անձեռնմխելի գաղթնել. սակայն մինչև 1920 թուականը չի յաջողւում այս կէտը կատար ածել։ Այդ խիստ նպատակով 100 թուման յատկացրւում է ծրագրի այդ կէտին և դրւում է տոկոսով։ Այս շրջանի վերջում Ընկերութեան անդամուհիների թիւը հասնում է 90-ի։

Ս. Կ. Որբանոց — 1920 - 21 թուականներին Որբանոցի աշակերտների թիւը հասնում է 17 - ի, բայց հետզհետէ աւելանալով բարձրանում է 23 - ի, որոնցից 14 հոգի խնամւում են հանդ. Յարութիւն Աբգարի հրիտասած դրամագի հաշւին, մի երկուսը վճարում են շատ չնչին ամսավճար և միւսները բոլորովին ձրի։ Վարչութեան նախկին նախագահուհի տիկ. Մազիկ Շուքուրեանը յօգուտ Որբանոցի մի շօշափելի գումար է հայթայթում քէ Սինգափուրում և քէ Զաւայում որը 3244 գիլդր ապահովացնում է։ Նաև Որբանոցի համար ստացւում է Լօնդոնում ապահոված 100 պաուէնդի տոկոսը և Աբգարեան Բարեգործութեանց Յանձնաժողովից մի յաւելեալ հրիտասած գումարի տոկոս 20019 դրան, ինչպէս նաև Որբանոցի հաշւին զանազան անհատներից դրամական նւէրներ։ Այլև յօգուտ Որբանոցի կազմակերպւում է մի ներկայացում դերասան Սանամեանի աշակցութեամբ և ունենում է 239 դրան 80 սէնթ զուտ մուտք։ Այս շրջանի վերջում Որբանոցի դրամական պահեստը յետևեալն է։

Գումարած նպաստամատոյց յանձն. վճարած տոկոսով

	դրան	20000
Ց. Պ. Յանձնախմբին	»	5000
Մի քանի մասնաւոր անձանց	»	3200
Աւանդ դրւած Ս. Ա. Վանքում	»	5000
Գումարը դրան		33200

Վարչութիւնը կազմակերպում է կրթական դասախօսութիւններ տալ Որբանոցի սանուհիներին և Օր. Թամթուն Մատաթեանը յանձն է առնում, որ և երկար ժամանակ շարունակւում է։

1922—29 ՇՐՋԱՆ

1922 Թւի Օգոստոսին նոր վարչութիւն է ընտրւում և անցնում գործի գլուխ, շարունակելով նախկին վարչութեան գործերը՝ քաղցրեղէն և խմորեղէն պատրաստելու աշխատանքը, ձեռագործարանը, դասախօսութիւնները, նաև կազմակերպում է մի ներկայացում «Աշուղ-Ղարիբ», որոնցից գոյացւում է բաւական մի հատոյք Ընկերութեան հաշւին։ Այս շրջանին ստանում են «Սէր Գօղոսեան»-ի հրատարակած դրամագլխի տոկոսները։

Հանգուցեալ Սէր Գօղոսեանն իր մօր՝ Սօֆիա Մկրտչեանի յիշատակին 10000 դրւդը էր դրել Ստեփան Գօղոս Ընկերութեան տրամադրութեան տակ, տարեկան տոկոսը փոխադրելու վարչութեան, յատկացնելու տեղիս այրիների և Որբանոցի որբերի գործադրութեան համար, 1922-23 և 24 Թւերի տոկոսները փոխադրւում է և յատկացւում իր նպատակին։ Այդ շրջանում Որբանոցը ունենում է 26 սանուհիներ բացի մի երկուսից որ չնչին գումար են վճարում մնացեալները բոլորովին ձրիաւարժ։ Որբանոցի հաշւին բուժացւում են նաև Աբգարեան աւանդի հրատարակած. գրքոյկների տոկոսները, ինչպէս նաև Փերիա գաւառում դրսնորւող կալւածների տարեկան հատոյքները։ Տիկ. Ծաղիկ Շուքուրեանի ւսած տեղեկութեան համաձայն, իր ձեռքով հանգամանալից գումարն ապահովացնում է պանդոան ընկերութիւնների մօտ և այդ գումարի մի մասից էլ գնում է 2-հատ Ջուաս քանքի բաժնեթուղթ յօգուտ Որբանոցի։ Ընկերութիւնը լօնգօնում Որբանոցի հաշւին ապահովացրած 100 պաունդը աւելի հատոյքաբեր գարձնելու համար, գնում է փոխառութեան տոկոսաբեր թղթեր, ինչպէս և տիկ. Ծաղիկ Մէլքումեանի կողմից հանգամանալից գումարը, որ գտնւում էր Մանչսթրում, փոխադրւում է Մինգափուր և ապահովացնում Ստեփան Գօղոս Ընկերու-

թեան մօտ։ Ընկերութիւնը դիմումներ է անում պանդոան տեղեր մասնաճիւղեր ունենալու. դիմում են Սուրբայեան, որին՝ ի պատասխան յայտնում են, որ Ջաւայում կազմւել է Հայաւհեաց Բարեգործական Ընկերութիւն՝ Ռուբէն Մ. վարդապետ Մանասեանի յորդորով, որի նպատակն է օդնել Հայրենիքին և պարբերաբար օժանդակել պանդոան վայրերում գտնւող որբերին, աւելացնում են թէ այդի առաջ կունենան նաև տեղիս Բարեգործական Ընկերութեան և Որբանոցին, և ուղարկում են իրանց Կանոնադրութենից մի օրինակ։ Ընկերութիւնը կար ու ձևի նոր դասեր է բանում ղեկավարութեամբ՝ տիկ. Նվարդ Մաքսապետեանի, հետևեալ պայմաններով, որ 20 աշակերտուհու համար վճարւի իրան ամսական 20 Բուման, իսկ 20 թիւը լրանալուց յետոյ, նոր ամսրդի համար վճարւի իւրաքանչիւրին ամսական 10-ական դուան բացի դրանից ամսրեցնէր նաև Որբանոցի սանուհիներից 5 հոգու։ Պարոյանական աշակերտուհիների համար 5 դուան պէղջով։ Գործը բաւական յաջողութեամբ առաջ գնաց, յաճախեցին 32-ի չափ ամսրդողներ, որից մնաց եղաւ 2637 դուան, վճարւեց տիկնոջ բաժինը 1560 դուան, իսկ Ընկ. մնաց դուա արդիւնք 984 դուան։ Ընկերութիւնն իր մասնակցութիւնն է բերում Գ. Տիգրան Աբգարեանին, Ներսէս Աբգ. եպիս. Մելիք Թանգեանի և «Հայաստանի կոչնակ» թերթի յօրելեաններին դրւատելով և գնահատելով նրանց գործունէութիւնը, ինչպէս նաև մասնակցում է Շիրակի երկրաշարժից վնասւածների հանգանակութեան 1926-27-և 28 Թւականներին Ընկ. կողմից ուսուցչուհի է ուղարկւում Թավրիզեցի հայ դիւղը։ Ըստ նախկին սովորութեան, ամեն տարի դպրոցի չքաւոր աշակերտուհիներին բաժանւել են դասագրքեր, գրենական պիտոյքներ և Ծննդեան Տօներին զգեստաւորւ համաձայն Ազգ. երկսեռ Դպրոցների Հոգաբարձութեան դրութեան 1924 Թւականից Որբանոցի

աշակերտներից ևս թոշակ են պահանջում և ըստ դասա-
րանական նօրմի ամեն ամիս վճարում է 153 դրամ։

1929—33 ԵՐՋԱՆ

Մի նոր վարչութիւն դալով առաջի հերթին աշխատում է կար ու ձևի արհեստանոցը վերաբացել, քա-
նի որ այս ճիւղը բաւական շահաբեր էր Ընկերութեան համար։ Հրաւիրում են մի դեկավար և առաջի հերթին յաճախում են 25-ի չափ աւագրուհիներ, բայց դեկավարն անբաւարար լինելով իր առճիկից դործը թողնում է, արհեստանոցը նորից իր դործը շարունակում է Թէհրանից տեղս եկած մի ուրիշ տիկնոջ դեկավարութեամբ՝ 3 ամսուայ կուրսով։ Սովորողների թիւը բարձրանում է 35-ի, եկամուտի 2-բաժինը վճարում է տիկնոջ իսկ մէկ բա-
ժինը մնում է Ընկերութեան։

Նպաստներ։— Ընկերութիւնը չի դլանում իր սահ-
մանափակ միջոցներից նպաստ հասցնել՝ Զանդեդուբի, Սալ-
մաստի և Խոյասանի երկրաշարժից վնասուածներին, նաև Բէյրութում հրդեհից թշուառութեան մատնուած 4000 հայ ազդրնակութեան, ինչպէս նաև երևան Թագի Ս. Սարդիս եկեղեցու նորոգութեան համար հանդանակութեան։ Յով-
սէփ Պօղոսեանեան Յանձնախմբի կողմից բժիշկ է ուղարկ-
ուում հայ դիւղերը տարափոխիկ հիւանդութեանց առաջն առնելու։ Ընկ. ևս իր մասնակցութիւնն է բերում յիշեալ ծախքերին, ասելին Համայնական Մօրհրդի կողմից վան-
քում մի ժողով է դումարուում այն հաստատութեանց ներ-
կայացուցիչներից որոնք Փերխա դասւում կալւածներ ունեն, որպէս զի մի դիւղատնտես ուղարկեն, նրանց տըն-
տեսական դրութիւնը բարելաւելու և նրանց գործելու առաջն առնելու համար։ Այդ ծրագիրը իրագործելու համար

անհրաժեշտ էր բաւականաչափ դումար, որը պէտք է հայ-
թայթէր յիշեալ հաստատութեանց աջակցութեամբ, բայ-
ւեց մի հանդանակութիւն, Վարչութեան կողմից վճարուեց 1000 ռուբլի 1929, 30, 31, 32 և 33 թուականներին Ընկ. կողմից ուսուցիչ է ուղարկուում Դավլաթաբադ և վերին քրդեր դիւղերը, հոդալով միևնոյն ժամանակ նոր պատ-
րաստուած դասարանների համար՝ դոներ և պատուհաններ։

Գրադարան-Ընթերցարան— 1932 թին Վարչութիւնը ձեռնարկում է «Իմմիրյիան» Գրադարան Ընթերցարանի դրքերը կանոնաւորելու և համաթիւ դնելուց յետոյ պարզ-
ուում է, որ դրադարանն ունի 360 հատոր դրքեր։ Համայ-
նական Խորհուրդը դիմում է Ընկ. որ դրադարանում դրա-
նուող սկզբնական 30 տարուայ «Հանդէս Ամսօրեայ» և «Բազմավէպ» հանդէսների հաւաքածոները նուիրել Ս. Ամե-
նափրկչեան Վանայ Մատենադարանին։ Վարչութիւնը յար-
դելով դիմումն՝ ընդամենը 35 դիրք, որոնք կազմած նը-
ւիրում է Մատենադարանին։

Ս. Կ. Որբանոց— Այս շրջանում, Որբանոցը ունենում է 32 սանուհի, որոնցից 2-ը միայն վճարովի են. իսկ մնա-
ցածները բոլորովին ձրի։ Աբգարեան յանձնախմբի հետ մի խորհրդակցական ժողով է լինում, որտեղ համաձայն բիւդջէի, մի որոշում է կայացուում, որ մշտապէս 32 սան պահի, 20-ը Աբգարեան և 12-ը Որբանոցի հաշին։ Ընկե-
րութեան Վարչութեան չանքերով, այս շրջանին պատ-
րաստուում է որբանոցի բաղնիքը՝ Յ. Պօղոսեանեան Յանձ-
նախմբի կողմից։ Նաև Աբգարեան Յանձնախմբի հետ մի-
ասին, էլէկտրական լուսաւորութիւնն են հաստատում Որ-
բանոցում, ինչպէս և Որբանոցի փայտեայ անգործածելի մահճակալները փոխարինուում է երկաթեայ մահճակալներով։

Գործագործարան— Ս. Կատարինեան արհեստ-
Գործագործարանը հիմնել է Ս. Կատարինեան կաւսանայ Մենաստանում 1901 թին, ժամանակի Առաջնորդական



Գործագործներն իրենց հսկիչների հետ

փախանորդ՝ հայր Բագրատ վրդ. Վարդապարեանի նախա-ձեռնութեամբ. իր նախագահութեան ներքոյ գտնուղ Առաջ. խորհրդարանի անդամներէն գործակցութեամբ և Ջուղայի բարերարներէն օժանդակութեամբ Աբրեստանոյի նպատակն է եղել տարածել նոր-Ջուղայի օրիորդներէն և կանանց մէջ օգտակար արհեստներ, որով մինչոյ տրուէր ապնիւ աշխատանքով հայրապետելու իրենց օրական պարէնը։ 1903 Թւէն գործազուրկներուն հակազդութիւնը յանձնառու է Հայ Բարեգործ. Ընկերութեան վարչութիւնը ամեն չաբթ գործադրում է գործազրկներուն դիմումները պահպանելու և լաւ հիմքերի վրայ դնելու ձգտող կազմակերպում է գործերի վիճակախաղ, պատրաստուած գործերէն ուղարկում է Հնդկաստան, Թէհրան, Համադան և այլ տեղեր. գործող աշակերտուհիներուն համար դասախօսութիւններ է ունենում, խրախուսում է նրանց, որ բացի չքողնեն այդ արհեստը, սակայն օրիորդներուն համար ուրիշ ձեռագործներով զբաղելն ունէլի հետաքրքիր լինելով, քան թէ գործազրկութիւնը, որ նստակեաց աշխատանք է, հետզհետէ պակասում է գործողներուն թիւը, հապա իր գոյութիւնը պահպանում է մինչև 1931 թիւը և փակուում։ Նոր կարն ցոյց է տալիս Աբրեստանոյ Գործազրկաբանի գործողներն իրենց հակիչներուն հետ

(Հայաստիւտ և պատմական նկարը)

1933—39—ի ՇՐՋԱՆ

1933 թւի Սեպտեմբերին նոր ընտրութիւն է լինում և անցնում պաշտօնի Նախագահ՝ Օր. Աբիսէն Տ. Գասպարեան, Գանձապահ՝ Տիկ. Ծաղիկ Ազգարեան, Փոխ-Նախագահ՝ Տիկ. Վարդուհի Մուրադեան, Գանձապահ՝ Տիկ. Ծաղիկ Ստեփանեանեան 1933 թւի Հոկտեմբերին վանքում, Համայնական խորհրդի հրաւէրով մի ժողով է գումարուում

Թաղական և Բարեգործական հաստատութեանց կողմից, տեղւոյն գանուող 100-ի չափ գաղթականութեան օգնելու, որոյն ժողովի որոշմամբ գործադրծարանի շէնքը տրամադրըւում է նրանց պատսպարելու համար։ Ընկ. մասնակցութիւն է ունենում Թաղադրութեան տարեգրքին և նւիրում 300 ռիալ։ Թաղէի վանքի նորոգութեան համար հանգանակութեան մասնակցում է 250 ռիալով։ Փերիա գնւում տիրող սովի առաջն առնելու համար 500 ռիալի մի դրամական օգնութիւն է անում։ 1934-35 թւերի դպրոցների բացը ծածկելու համար իր կողմից 2500 ռիալ նպաստ է տալիս։

Օգնութիւն է անում նաև Թաւրիզի Արամեան դպրոցի բիւդջէի բացը ծածկելու համար 500 ռիալ նպաստով և այլ գանագան օգնութիւններ։ 1933-38 թւականներին ուսուցիչներ է ուղարկում վերին Քրդեր և Դովլաթաբադ դիւղերը, յատկացնելով ամբեկան 100 թումանի մասնակցել է նաև Աստւածաշնչի հայերէն թարգմանութեան 1500 ամեակի առթիւ եղած հանդիսակատարութեանն։

Ընկերութիւնն իր մասնակցութիւնն է բերում գանագան անհատների և հասարակական գործիչների յուղարկաւորութեանց և հոգեհանգստեան արարողութիւններին, ինչպէս օրինակ՝ հանգուցեալ Միքրա-Ճրուեիւն Ճորգանանեանի, Գալստան Միքայէլեանի, Տէր Մաշտոց քահ. Խաչատէլեանի, տիկ. Սանդուխտ Ղուկասեանի, ՚ի Տէր հանգ. Խորէն Կաթողիկոսի, ինչպէս նաև Մայլէսի պատգամաւոր՝ Յովսէփ Միրզայեանի։

Տղայոց Որբանոց։— 1934 թւի Յունւիսին Համազգային խորհրդի հրաւէրով, Թաղական և Բարեգործական հաստատութեանց կողմից մի ժողով է գումարւում, որտեղ արծարծւում է տղայոց Որբանոցի բիւդջէն կանոնաւորել։ Գանագան կարծիքներից յետոյ ժողովը հանգում է այն եզրակացութեան, որ զոյգ Որբանոցները միացրեն

